Գուցէ եւ գերագնահատում եմ մեր պետական պաշտօնաթերթում առանց մեկնաբանութեան լոյս տեսած «Կոչի» նշանակութիւնը, որը չունի անգամ հեղինակ, կամ հիմնադիրների անուն. նոր ստեղծուելիք կուսակցութիւնը չունի հասցէատէր, բացի մէկ հատիկ հեռախօսահամարից: Սակայն նկատի ունենալով կուսակցական մոլեռանդութեան մէջ հեզգիեսէ ամրապնդուող մեր ընտրական մօտեցումները, հատուածամտութիւնն ու անհանդուրժողականութիւնը, մօտիկ ապագայում Լոս Անջելեսում նախատեսուող նախագահական տոնի՝ «Բրաւօ Հայաստանի» ընծեռնելիք պատեհութիւնները, երեւանից մինչեւ Կալիֆորնիա ձգտող քաղաքական-կուսակցական թեղերը վախենում եմ, որ մի տեղ այս բոլորը հանգուցաւորուեն, կապուեն, առաւել խճճելով Սփիւռքին, վնասելով նաեւ մեր պետականութեանը:

Վերջում չեմ կարող «Կոչի» ընթերցումից ստացած տպաւորութեան տակ 3 տարակուսանք չարտայայտել.

ա. Հանրապետության նախագահի կողմից սփիւռքում գործող մեր ազգային կուսակցութիւնների ժամանակաւորութեան («անախրոնիզմ») մասին տեսութիւնը կիրառելի պիտի լինի՞ նաեւ նոր ստեղծուելիք կուսակցութեան նկատմամբ:

բ. Ի՞նչ պիտի պատահի ՍՀՀՇ-ին, եթէ, ասենք, մի օր ՀՀՇ-ն կորցնի իշխանութիւնը կամ ինքնալուծարուի:

գ. «Հայաստանի պետականութեան կայացման եւ ամրապնդման» գործում ինչպիսի՞ դիրք պիտի գրաւի ՍՀՀՇ-ն, եթէ առաջիկա ընտրութիւններում Հանրապետութեան նախագահը չվերընտրուի եւ կամ վերընտրուի՞ առանց ՀՀՇ յենարանի:

ՅԱՐՈՒԹ ԱՌԵՏՈՒԶԵՆ.

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հրայր Թամրազյան. «Հայրենիքը պիտի լինի կրծքիդ տակ»

«Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայության ղեկավարը պատմում է կայանի նոր դեմքի մասին

Հրայր Թամրազյանը Խ. Հայաստանից գաղթել է 1989 թվականին, բնակություն հաստատել Նյու Յորքում: Մինչեւ 1992 թվականի մարտը աշխատել է «Ազատ Եւրոպա-Ազատություն» ռադիոկայանի Նյու Յորքի գրասենյակում: 1992-ի աղրիլին տեղափոխվել է Մյունխեն, ուր մինչեւ այժմ աշխատում է «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունում: Այս տարվա մայիսին նա նշանակվեց հայկական ծառայության տնօրենի պաշտոնակատար: Թամրազյանի առաջին իսկ գործը եղավ խմբագրական աշխատանքի կատարելագործումը: Փոխեց ծրագրերի կառուցվածքը, ավելացրեց Ռուսաստանին ու ԱՊՀ-ին վերաբերող նյութերը, Հայաստանի թղթակիցների հաղորդումները, սկսեց նոր հաղորդաշարեր: Մինչ այդ Հրայր Թամրազյանը երկար տարիներ աշխատել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայում: Նա տնտեսագիտության թեկնածու է: Թամրազյանի հեղինակությամբ 1988 թվականին Հայաստանի Գիտությունների ակադեմիան հրատարակել է «Հայ տնտեսական մտքի զարգացումը 19-րդ դարի երկրորդ կեսին» աշխատությունը: Լրագրող ԱՆՆԱ ԽՄԲԱԹԵԼՅԱՆԸ նա պատմում է հայկական խմբագրության առօրյայի մասին:



- Ի՞նչ եք կարծում, ամերիկյան ռադիոկայանի համար էական նշանակություն ունի՞, որ նրա հայկական ծրագրի տնօրենը սփյուռքահայ կամ հայաստանցի լինի, կուսակցական կամ ոչ:

- Մինչեւ այժմ «Ազատություն» ռադիոկայանի բոլոր տնօրենները եղել են հայաստանցիներ: Կարծում եմ, որ Հայրենիքում աղրելու փորձառությունը պարզապես անհրաժեշտ է հայկական ծրագրերը ղեկավարելու համար: Բացի այդ, հայկական ծրագրերը վերաբերում են ոչ միայն Հայաստանին, այլ նաեւ հարեւան երկրներին, նախկին Խ. Միության տարածին: Հայկական իրականությունը դժվար է հասկանալ առանց Ռուսաստանի, իսկ դրա համար անհրաժեշտ է նաեւ ռուսերենի, ռուսական իրականության իմացություն: Դրսում ապրող մեր հայրենակիցները, դժբախտաբար, այդպիսի գիտելիքներ չունեն: Հետո, մեր աշխատանքային լեզուն արեւելահայերենն է, որը նույնպես պահանջում է հայաստանյան կրթություն եւ փորձառություն: Ինչ վերաբերում է կուսակցականությանը, կարծում եմ, դա բոլորովին կարեւոր չէ: Նախկինում մենք ունեցել ենք եւ կուսակցական, եւ անկուսակցական տնօրեններ: Կարեւորն այն է, որ տնօրենը եւ ընդհանրապես լրագրողը լինի անկողմնակալ, անաչառ: Ես ինքս կուսակցական չեմ: Սակայն, իմ կարծիքով, կա մի անհրաժեշտ նախապայման ամեն դեպքում Հայրենիքը պետք է լինի կրծքիդ տակ:

- Ո՞րն է «Ազատություն» ռադիոկայանի թիրախը: Եթե այնուամենայնիվ Հայաստանի ունկնդիրն է, կարծո՞ւմ եք, որ կարողանում եք բավարարել հայաստանցի ունկնդրի եւ արտաքին, եւ ներքին կացության վերաբերյալ հետաքրքրությունները, ազդել հասարակական կարծիքի վրա:

- Անմիջապես ասեմ, որ մենք թիրախներ չունենք: Մենք ունենք ունկնդիր. դա Հայաստանի ու Դարաբաղի ունկնդիրն է: Մեզ լսում են նաեւ Մերձավոր Արեւելքում, Պակիստանում, Թուրքիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Միացյալ Նահանգներում, Վրաստանում, Ռուսաստանում եւ նույնիսկ Ավստրալիայում: Բայց մեր գլխավոր մտահոգությունը հայաստանցի ունկնդիրն է, եւ մենք ցանկ չենք խնայում բավարարելու նրա պահանջները: Դժվար գործ է, սակայն, կարծում եմ, արդեն հաջողություններ ունենք: Հեռարձակման պայմաններն այնքան էլ բարենպաստ չեն: Շատերն էլեկտրականություն չունենալու պատճառով չեն կարողանում լսել միջին ալիքով երեւանի ժամանակով ժամը 18-19-ը ուղիղ եթեր հեռարձակվող հաղորդումները: Իսկ քաղաքային ցանցով հաղորդումները վերահեռարձակվում են առավոտյան ժամը 6.40 ից 7.40: Բայց ինձ արդեն հայտնի է, որ շատերն են արթնանում այդ ժամին եւ լսում մեր հաղորդումները: «Մեր օրն սկսվում է «Ազատություն» ռադիոկայանի հաղորդումներով, այս խոսքերը շատերն են ասում:

Մեր ռադիոկայանի երեւանի թղթակիցները շատ տաղանդավոր են եւ կարող են հաջողությամբ մրցել արտասահմանյան թղթակիցների հետ: Նրանց հաղորդումները վերստեղծում են Հայաստանի ներքին կացության առարկայական պատկերը: Ինչ վերաբերում է դրսին, ապա այստեղ ռադիոկայանի հնարավորությունները նույնպես մեծ են: Փորձում ենք հնարավորին չափ մեծ ուշադրություն դարձնել արտաքին քաղաքական այն իրադարձություններին, որոնք անմիջականորեն կամ անուղղակիորեն կարող են առնչվել Հայաստանի հետ: Օրինակ, ՀՅ նախագահի վերջին այցը Միացյալ Նահանգներ: Այս դեպքում մենք մրցակից չունենք:

- Փորձեք ներկայացնել «Ազատություն» ռադիոկայանի «խոհանոցը»: Ինչպե՞ս է կատարվում լուրերի ընտրությունը, ի՞նչ աշխատակարգ ունեք եւ այլն:

- Սյուժեների մեր խմբագրակազմը բավական հնուց է եւ փորձառու: Ողջ աշխատանքը հմտակարգիչներով է կատարվում: Այս իմաստով հայկական ծառայությունը թերեւս միակն է մյուս ազգային ծառայությունների մեջ: Մեր հայ ունկնդրի համար խիստ կարեւոր է նաեւ Սփյուռքը: Մենք թղթակիցներ ունենք Լոս Անջելեսում, Նյու Յորքում, Փարիզում, Լոնդոնում, Պրահայում, Մոսկվայում: Հայկական ամուլը բոլորովին մոռացության է մատնել Արեւելյան եւ Կենտրոնական Եւրոպան: Այս տարածաշրջանը հետաքրքիր է հայ ունկնդրի համար, ոչ միայն միջազգային քաղաքականության իմաստով: Այստեղ ծեւավորվում են հայկական նոր գաղթօջախներ: Թափանցիկ է, բայց փաստ, որ հայկական սփյուռքի ուշադրությունը ասիճանաբար տարածվում է նաեւ Արեւելյան Եւրոպա: Շնորհիվ Պրահայից տրված թղթակցության, հայ ունկնդիրը տեղեկացավ այդ երկրում ապրող հայերի մասին: Շուտով թղթակիցներ կունենանք նաեւ Կանադայում, Ավստրալիայում եւ Արգենտինայում:

- Վերջերս ձեր հաղորդումներով սկսեցիք մի տեսակ ես գնալ, սկսեցին ներկայացվել արխիվային ձայնագրություններ: Առաջ գնալու ծրագիր կա՞:

- Ունենք բազմաթիվ նոր հաղորդաշարեր՝ «Մեկնաբանում են երեւանցիները», «Քաղաքական խճանկար», «Սկանդալ», «Մշակույթ եւ արվեստ», «Ամերիկացիները հայերի մասին», «Ռուսական մամուլի տեսություն», «Հայաստանի կուսակցությունները սկսում են նախընտրական արշավը», «Հայոց պետականության ակունքները», ընդարձակել ենք «Ժողովրդավարական փորձառություն» հաղորդաշարը, որտեղ հանրամատչելի լեզվով բացատրվում են տնտեսական տեսության, գործարարության հիմունքները, լուսաբանվում է արեւմտյան առաջատար երկրների ժողովրդավարական փորձը եւ այլն: Իսկ «Հայոց պետականության ակունքները» հաղորդաշարը, ինչպես դուք եք նկատում, ամենեին էլ նահանջ չէ: Արդեն հեռարձակել ենք վարչապետ Վրացյանի հարցազրույցը, որն իմ կարծիքով պատմական մեծ արժեք է ներկայացնում: Այն կարեւոր է նաեւ այսօրվա համար, պետականության հաջորդականության շղթայի պահպանման իմաստով: Մենք հիշում ենք անցյալը հանուն ապագայի: Սա մեր ժողովրդի համար խիստ նվիրական սկզբունք է, եւ մենք պարտավոր ենք հետեւել դրան: Մեր միակ նպատակն այսօր Հայաստանի անկախությանը, ժողովրդավարական կառույցների ամրապնդմանը եւ ազատ մամուլի ու տեղեկատվության զարգացմանը նպաստելն է: Ահա այս է այսօրվա «Ազատություն» ռադիոկայանի փիլիսոփայությունը: Եթե մենք կարողանայինք այս իմաստով ազդել հասարակական կարծիքի վրա, դա կլիներ մեր հաջողությունը:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

Ինչոպատերազմյան շինության գոռոզ երկնաքերների լուսամուտները մութ են, նախասրահները դատարկ: Ժամանակն առած, դեղնած «վաճառվում է» ոլորտների մոտով անտարբեր անցնում են գնորդները: Այսօր այսպիսի տեսք ունի աշխարհում հայտնի վողոցը Նյու Յորքում Ուոլ սթրիթը գովաբանված կամ անիծված այս կենտրոնը:

Ֆինանսական այն կայսրությունը, որը նախկինում Ուոլ սթրիթ հասցրեց դատարկվել: Ուոլ սթրիթը անախորժիզմ դարձավ: Լուրջ ֆինանսիստներին և բեբեռամիս ֆերկներին հրաժարում են ուրիշ երջաններ, որտեղ հնարավոր է օգտվել ավելի ժամանակակից տեղեկատվական սարքավորումներից, որտեղ ռեստորաններում ավելի լավ են կերակրում, իսկ աշխատատեղ հասնելը մետրոյով կամ մերձքաղաքային էլեկտրագնացքներով ավելի դյուրին է:

ԱՄԵՐԻԿԱ

Համաշխարհային կապիտալիզմի կենտրոնը Ուոլ սթրիթից տեղափոխվում է

կացողությունն էր ներկայացնում, վաղուց է լքել իր բույնը: Նման մի բան կատարվեց նաև Հոլիվուդի հետ: Կինեմատոգրաֆիստները, որոնք իրենց հոտոտաբար նույնացնում են Հոլիվուդի հետ, իրենց կինոստուդիաները կառուցում են ավելի հրաժարի տեղերում: Այժմ սենսացիան Ուոլ սթրիթ կա և Նյու Ջերսի նահանգում, և Լոս Անջելեսում: Ուոլ սթրիթ կա նաև ամերիկյան յուրահանչյուր քաղաքի արվարձանում գործարար ֆինանսական ձեռնարկությունների կենտրոնատեղում և կարող է «ստեղծվել» նույնիսկ մասնավոր բնակարանում, երբ գործի տերը կահավորել է անհրաժեշտ էլեկտրոնիկայով:

Ինչ վերաբերում է բուն Ուոլ սթրիթին և նրան հարող մեկ քառակուսի մղոն տարածությանը, աղա այնտեղ ամեն ինչ անկում է առնում: Ուոլ սթրիթը զոհ դարձավ և իր տարիքի ոլորտներով, որն ամերիկյան չափանիշներով բավականին մեծ էր, և աշխարհով մեկ հայտնի երկնաքերների բարոյական մաշվածության ոլորտներով, որոնցում տեղավորվում են գործարար գրասենյակները: Ուոլ սթրիթը անախորժիզմ դարձավ: Լուրջ ֆինանսիստներին և բեբեռամիս ֆերկներին հրաժարում են ուրիշ երջաններ, որտեղ հնարավոր է օգտվել ավելի ժամանակակից տեղեկատվական սարքավորումներից, որտեղ ռեստորաններում ավելի լավ են կերակրում, իսկ աշխատատեղ հասնելը մետրոյով կամ մերձքաղաքային էլեկտրագնացքներով ավելի դյուրին է:

Այս տարի տաղալվեց Ուոլ սթրիթի հիմնադրամային բորսայի նոր շենքի շինարարության նախագիծը: Ոչ ոք դրա նկատմամբ հետաքրքրություն չցուցաբերեց: Ուոլ սթրիթի ամենաբարձր շենքերից մեկը վաճառվեց 68 միլիոնով դոլար, քան տարիս էին տրվ տարի առաջ: ԱՄՆ-ի ոլորտամությունը չգիտի մեկ այլ դեղք, որ առաջներում եկամուտ բերող անշարժ գույքի գինը այդպիսի արագությամբ ձեռով ընկնի:

Ուոլ սթրիթի աշխատասենյակների մեկ երրորդն այժմ դատարկ է: Մի քանի տարի է, ինչ դատարկ է 55 հարկանի երկնաքերը՝ այն ոլորտից, երբ այստեղից տեղափոխվեց նրա նախկին սեփականատերը՝ ԱՄՆ-ի ֆինանսական երջաններում չափազանց հարգված Դրեքսել Բուրնամ Լամբերը, երկնաքերի և ոչ մի սենյակ գնորդ չունեցավ:

Վերջին յոթ տարում աշխատանքը կորցրեցին հարյուր հազարից ավել մարդիկ, որոնք այսպես թե այնպես կապված էին Ուոլ սթրիթի կայսրությանը: Ֆինանսական ֆիրմաները կարիք չունեն աշխատակիցների: Մրցակցությունը սաստիկ է, ստիպված են ծախսեր չանել շեղ հարկաբաժինների կամ աշխատակիցների վրա, որոնց կարիքն այնքան էլ մեծ չէ: Բացի դրանից՝ նույնիսկ ամենախոշոր ֆինանսական գործողությունները գործնականում կարելի է ամենուրեք իրականացնել:

Այն բիզնեսմենները, որոնք, այնուամենայնիվ, նախընտրում են Նյու Յորքը, կարիք ունեն ժամանակակից, բարձր առաստաղով դահլիճների, որտեղ կարելի է տեղադրել էլեկտրոնային սարքավորումներ: Իսկ Ուոլ սթրիթի շենքերի մեծ մասը կառուցվել է ոլորտամից առաջ, ուստի հարկերը ցածր են, սենյակները՝ նեղ:

Նյու Յորքի գործարար կենտրոնում շենքերի վարձը այնքան չնչին է, որ սանտրերը հաճախ նստած են առանց փողի: Արդեն սնանկացել են երեք տասնյակ տանտերեր այնպիսի երկնաքերների, որոնցում տեղավորված էին աշխարհի ֆինանսական ճակատագրերը երբեմնի լուծողները:

Առանց խոշոր ներդրումների որևէ նորույթ անհնարին է: Իսկ առանց էլեկտրոնային նորության՝ գրասենյակ չես հանձնի:

Նյու Յորքի անշարժ գույքի խոշոր վաճառականներից մեկն ասաց. «Ուոլ սթրիթին հարկավոր է ոլորտցիկ նյութի մի լավ լիցք և նրան հարող տարածքի մարում: Չորս հարյուր տարում առաջին անգամ անհրաժեշտ եղավ քաղաքի գործարար մասում ոչ թե նոր շենք կառուցել, այլ լուծարել»:

«Մոսկիչյոնդ ոլրես» AP

ԱՆԳԼԻԱ

Հռոմի պապի վրա կրակում էին Վատիկանի պատվերով

Սենսացիան միշտ էլ սենսացիա է: Այնուամենայնիվ ոլորտահում են աներևակայելիները: Այդպիսի տղավորություն է թողնում բելգրադյան «Պոլիտիկա» թերթի հաղորդումը, որն ուղարկել էր Հռոմի նրա սեփական թղթակիցը:

Ահա թե ինչ ոլորտեց նա, հիմնվելով Հռոմի «Վոչե» թերթի հրապարակման վրա, որը խմբագրում է իտալական լրագրության ավագը՝ 85-ամյա Ի. Մոնտանելին: 1981 թվականին Հովհաննես-Պողոս II-ի վրա մահափորձը, որը կատարեց թուրք ահաբեկիչ Ալի Աղջան, կազմակերպվել էր սուրբ մայրաքաղաքի Վատիկանի ոլորտերի ներսում: Այդ մասին հայտարարեց «գորշ եղբոր» մեղադրյալը: «Այն մարդիկ, որոնք հանձնարարել էին կրակել ոլորտի վրա, գտնվում են Վատիկանում: Այդ անձնավորությունները վատիկանյան բարձրագույն շրջաններից են, ինչպես նաև իտալական վերնախավի շատ հայտնի դեմքեր»: Չելիքը, որը մի քանի տարի առաջ բանտարկվել էր թմրադեղերի ընդհատակյա առեւտրի համար, հայտարարեց, որ այդ մասին դեռևս մեկ տարի առաջ հայտնել է ֆրանսիական գաղտնի ոստիկանության ներկայացուցչին: Մահափորձի նախապատրաստմանը, շարունակեց նա, մասնակցում էին նաև իտալական գաղտնի ոստիկանությունը և իտալական «Մոսադը»:

Իսկ ո՞վ էր շահագրգռված ոլորտի մահափորձով: Հայտնի է, թե ինչպիսի մեծ վրդովմունք առաջացրեց կաթոլիկ եկեղեցու նոր ղեկավարի լեհ կարդինալ Կարոլ Վոյտիլայի երեսուն գալը: Այդ կաղակցությամբ առանձնապես մտահոգվում էին Գերմանիայի աջակողմյան ուժերը, որոնց գլխավորում էր Բավարիայի թագադրված թագավոր Շտրաուսը: Դժգոհություն էր հայտնում նաև Դ. Ռոքֆելեր III-ը:

Լեհական կարդինալը զգուշացնում էր, որ ոլորտին կարող են սպանել Լեհաստանում, նրա առաջին այցի ժամանակ: Տեղի ունեցածից հետո ամեն ինչ վերագրվել էր կոմունիստներին, որոնցից այդ կերոջ վարկաբեկեն Վարշավային և Մոսկվային:

Հովհաննես-Պողոս II-ը եղավ ամենաանցանկալի հյուրը բուն Վատիկանում: Չորս հարյուր տարվա ընթացքում առաջին օտարերկրացի ոլորտը: Ինչոլիսի՞ խայտառակություն սուրբ եկեղեցու համար: Ուստի Չելիքը ոնդում է՝ գլխավոր դավադիրը գտնվում էր Վատիկանում:

Սենսացիան հայտնող Հռոմի թերթը՝ ի դեպ ամենաուրջը եւ հեղինակավորը, հիշեցրեց դատավարություններից մեկի ժամանակ Աղջայի հայտարարության մասին. «Բավական է: Դրան պետք է վերջ տվի: Վատիկանը բոլորից լավ գիտի, թե ինչ ոլորտեցում կազմակերպվեց մահափորձը ոլորտի նկատմամբ»: Իսկ հիշ հետո. «Բավական է ոչ մեղքը բարդել իմ եւ Բուլղարիայի ու Թուրքիայի վրա: Ամեն ինչի համար, իմիջիայլոց, ոլորտասխանատվություն կրում է միայն Վատիկանը»:

Թերթը հրատարակում է նաև հատվածներ Աղջայի նամակից, որը նա 1982 թվականի սեպտեմբերի 24-ին բանից հղել էր Վատիկանի ոլորտական քարտուղարին՝ բողոքելով բանտի ծանր ոլորտանքներից: Իսկ վերջին խոսքերը հետևյալն են. «Երբ դրամ ոչինչ չանեք, որ ոլորտեն ինձ հետաքննելուց, ես կոլորտեմ ոչ ճշմարտությունը»:

Մի խոսքով, Իտալիան հերթական շոկի մեջ է:

«Դարիքա», 11 օգոստոս

ՀԱՄԱՌՈՏ

Հռոմի պապը կայցելի Բոսնիա

ՎԱՏԻԿԱՆ, 18 ՕԳՈՍՏՈՍ, ՓՍՍ: Վատիկանը հայտարարել է, որ Հռոմի Հովհաննես Պողոս երկրորդ պապը պատրաստվում է խաղաղարար առաքելությամբ այցելել Բոսնիա: Նրա գալուստը Սարաեւո սպասվում է սեպտեմբերի 8-ին: Վերջնական որոշումը, սակայն, կկայացվի վերջին պահին՝ կախված տվյալ ժամանակահատվածում անվտանգության ապահովման առկա հնարավորություններից:

Վալենսան դեմ է լրտեսի նոր նշանակմանը

ՎԱՐՇԱՎԱ, 18 ՕԳՈՍՏՈՍ, ՓՍՍ: Լեհաստանի նախագահ Լեխ Վալենսան պահանջել է ներքին գործերի նախարարությունից վերանայել կոմունիստական շրջանի Լեհաստանի լրտես Մարիան Զախարսկուն երկրի հետախուզական վարչության պետ նշանակելու որոշումը: Զախարսկին գործակալ է եղել ԱՄՆ-ում 70-ականների վերջին եւ 80-ականների սկզբին: 1981 թվին նա ԱՄՆ-ում դատապարտվել է ցմահ բանտարկության, իսկ 1985-ին գործակալների առեւելյան խմբում փոխանակվել է նույնպես գործակալների, բայց այս անգամ արեւմտյան խմբի հետ: Ըստ Լեհաստանի նախագահի, այս նշանակումը կարող է բարդացնել երկրի հարաբերությունները Արեւմուտքի հետ:

ԳԴՀ-ն մասնակցել է Պրահայի ճնշմանը

ԲԵՌԼԻՆ, 18 ՕԳՈՍՏՈՍ, ՓՍՍ: Դանձայն օրերս հրապարակված նյութերի, ԳԴՀ-ի անվտանգության նախարարությունը ակտիվորեն մասնակցել է 1968 թվին Պրահայի խռովության ճնշմանը: «Շտազին» կանխել է համերաշխության ցույցերն ու բարեփոխումների կոչերն Արեւելյան Գերմանիայում, իսկ հետագայում ՊԱԿ-ի հետ հանատեղ վերականգնել Չեխոսլովակիայի անվտանգության մարմինները:

Are you looking for a challenge? Do you want to work with an international projekt?

Armenian Foundation for Small and Medium Enterprises (AFSME),

offering training and consultations to SMEs and funded by TACIS programme of the European Union, is looking for a

DIRECTOR.

As Chief Executive Officer you are responsible to the Board. Your duties include.

. general management and administration,
. promotion of AFSME and SME activities,
. project design, promotion and management,
. reporting to the Board and TACIS.

You should have at least 5 years of management experience and the following qualification.

. university degree in Business Administration, Management or Economics,
. experience in the SME or private sector,
. experience in project design, promotion and management,
. fluency in English, Armenian and Russian,
. good communication skills,
. computer and information skills are an asset.

Please send your letter of application and your Curriculum vitae to; AFSME, 355010 Yerevan, 19, Khandjian St. «Armproinvestmet», 3rd and 4rd floor, phone; 578231.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պարի սիրահարներին եւ հաճելի ժամանց ցանկացողներին

«PARADISE»

դիսկոտեկը օգոստոսի 20-ից հրավիրում է Ձեզ նորից զտնվելու ամեն շաբաթ or հետևյալ հասցեով. Պուշկինի 3ա, Ժուռնալիստի տուն

Մուտքը միայն զույգերով:
Սկիզբը՝ ժամը 18:00-ից
Տոմսերը տեղում, քանակը անսահմանափակ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ

ՉՎԱՑՈՒՅՑԱԿ

1994 թվականի օգոստոսի 1-ից մինչեւ օգոստոսի-31-ը

Երևանից (Հնարավոր)

Օրերը	Օդանավ	Մեկնում	ժամանակ	Չվերթ	Նպատակակետը	Չվերթ	Մեկնում	ժամանակ
-3- - - - -	ՏՈՒ-154	08.00	10.55	R3 1241	ԱԹԵՆՔ	R31242	12.10	*16.30
1-3-5- -	ՏՈՒ-134	08.20	11.25	R3 7117	ԱՇԽԱԲԱՏ	R3 7118	12.25	13.45
-2- - - - -	ՏՈՒ-154	08.00	14.00	R3 1241	ԹԱՇԿԵՆՏ	R3 1242	09.00	*16.30
-2- -5- -	ՏՈՒ-154	13.50	21.00	R3 7095	ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ	R3 7096	23.00	*00.35
- - - - - 7	ՏՈՒ-134	08.00	10.15	R3 105	ՍԹԵՐԼԻՆ	R3 106	11.45	13.10
1234567	ՏՈՒ-154	06.20	09.00	R3 910	ՄՈՍԿՎԱ	R3 909	10.20	12.45
- - -45- -	ՏՈՒ-154	13.00	18.15	R3 894	ՄՈՍԿՎԱ	R3 893	19.50	22.15
123- -67	ԻԼ-86	13.00	18.15	R3 900	ՄՈՍԿՎԱ	R3 899	19.50	22.40
- -3- -6 -	ՏՈՒ-154	08.20	19.45	R3 7091	ԿԻԵՎՈՒԿՐԱԻՆԱ	R3 7092	22.45	*02.55
-2-4-6-	ՏՈՒ-134	13.50	18.00	R3 7207	ՌՈՍՏՈՎ	R3 7208	23.00	*00.30
- - -4- - -	ՏՈՒ-154	12.00	18.15	R3 9037	ՍՍՄԱՐԱ	R3 9038	21.00	22.30
- - - -5- -	ՏՈՒ-154	11.00	17.15	R3 9015	Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ	R3 9016	19.30	22.50
1234567	ՏՈՒ-134	07.30	08.45	R3 7167	ՍՈՉԻ	R3 7168	10.45	12.00
- - -4- - -	ԻԼ-86	04.05	10.00	R3 9327	ՓԱՐԻԶ	R3 9328	21.00	*04.00

Երևանից (Դեպքում)

Օրերը	Օդանավ	Մեկնում	ժամանակ	Չվերթ	Նպատակակետը	Չվերթ	Մեկնում	ժամանակ
1-3-5- -	ՏՈՒ-40	10.45	11.35	PIO-27	ԹԲԻԼԻՍԻ	PIO-28	13.35	14.25
1234567	ՏՈՒ-40	08.00	09.30	PIO-45	ՄԻՆՍԿ	PIO-46	11.30	13.00
1234567	ՏՈՒ-40	11.30	13.00	PIO-43	ՄԻՆՍԿ	PIO-44	15.00	16.30
1234567	ՏՈՒ-40	14.30	16.00	PIO-47	ՄԻՆՍԿ	PIO-48	18.00	19.30
1234567	ՏՈՒ-40	08.30	10.15	PIO-17	ՍՏԱՄԲՈՒԼ	PIO-18	11.45	13.30
- -3-5-7	ՏՈՒ-40	14.45	16.30	PIO-3	ՍՏԱՄԲՈՒԼ	PIO-4	18.45	20.30
-2-4-6-	ՏՈՒ-40	09.00	10.15	PIO-29	ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ	PIO-30	11.45	13.30

Գյումրիից

Օրերը	Օդանավ	Մեկնում	ժամանակ	Չվերթ	Նպատակակետը	Չվերթ	Մեկնում	ժամանակ
-2-4-6-	ՏՈՒ-134	06.00	07.30	PT-7245	ԿՊԱՆԻԱ	PT-7250	09.00	10.30
-2-4-6-	ՏՈՒ-134	11.30	12.40	PT-7245	ՄՈՍԿՎԱ	PT-7246	19.45	20.45
1-3-5-7	ՏՈՒ-134	08.45	13.30	PT-639	ՍՈՉԻ	PT-519	16.05	19.30
-2-4-6-	ՏՈՒ-134	11.30	16.50	PT-7245	ՍՍՄԱՐԱ	PT-7246	17.50	20.45

* ժամանումը հաջորդ օրը

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ՀԱ գրասենյակներ կամ Ձեր ճամփորդական գործակալին:
Հեռ. 53-05-82, 53-06-62

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Զարեհ եղիսկոպոս Ազնավուրյանը, որի «Հայաստանեայց Առաքելական եկեղեցոյ երաժշտական ժառանգութիւն» աշխատության մասին է այս հոդվածը, իր «Մեղեդիներ, տաղաններ եւ գանձեր» վերտառությունը կրող 5-րդ հատորի ներածական խոսքում գրում է. «Այդ հակումը զգալուն շատ մը արուեստագէտ երաժիշտներու գրչին տակ հետզհետէ ձեւակերպուեցաւ իբրեւ մեղեդի եւ տաղ, որոնց գոյութիւնը առաւել աղոթամիտութեամբ ծանօթ է 8-րդ դարէն սկսեալ՝ Ստեփանոս Սիւնեաց Եղիսկոպոսի, անոր հոգ՝ Սահակ Դուխի եւ Այրիվանեցի Գրիգոր Գոգիկ վարդապետի ստեղծագործութիւններով»:

Հոգեւոր երաժշտության հանրագիտարանը

Զրեթե 15 դարի ճամփա է անցել հայ հոգեւոր երաժշտությունը. Մեսրոպյան գրերի հետ համահավասար ճամփա: Սահակ Պարթեւ Հայրապետին ու Մովսես Խորենացուն վերագրված մի քանի մեղեդիներ ինչպես վկայում է պատմությունը, արդեն հետագայում ստեղծված տաղերի չափական ու ներանակային հարստության հակումն են դրսեւորում:

Աշխատության ներածականում հեղինակը միաժամանակ տալիս է մեղեդիների, տաղերի ու գանձերի բնորոշումները, դրանց առանձնահատկությունները ու ծիսակատարությունների ժամանակ դրանց օգտագործման տարբերակները:

Զարեհ Սրբազանի հետ հանդիպեցինք Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիոյ հայոց կաթողիկոսության վեհարանում: Զրույցը երկար տեւեց: Այն հարցին, թե ինչպես է կարողացել նման մեծ ծավալի աշխատանք կատարել, պատասխանեց. «Աշխատանքի ժամերությունն, իհարկե, որեւէ ձեւով մեզ չդնեմ է կանգնեցնեն: Աշխատանքի անհրաժեշտությունն այնքան էր, որ անդադար ոգեւ մնալն այն ոգեւ է ձեռնարկեր: Մեր եկեղեցիների մեջ շարականները ծեսական օգտագործման են ենթակա, մեզ համար շարականները միայն բանգարանային առարկա չեն: Եւ որովհետեւ կար մի սերունդ, որ այդ շարականները, ինչպես նաեւ տաղերն ու գանձերը (վերջինս իբրեւ բանաստեղծություն գրքի անխախտ տաղաչափությամբ է ներկայանում), դրանք անգիր գիտեր, այնքան լավ, որ դրանք ծիսակատարությունների ժամանակ օգտագործելու համար գրավոր կարիքը չէր ունենում, այդ սերունդը հլամաց-կամաց հեռանում է մեզանից, եւ մեր եկեղեցիների մեջ՝ դոնիրներ, որոնք կան, արդեն անմիջականորեն դրանք չունեն իրենց հիշողության մեջ ամբարած: Պետք էր գտնել մի ձեւ, որ պահպանվեին շարականների անցյալում կատարված ձայնագրությունները, լիներ դա Լիմոնճյան ձայնագրությամբ, թե նոտագրական»:

Արդեն պատրաստ են եւ Բեյրութում լույս են տեսել աշխատության 6 հատորները, որոնք ամփոփում են «Արեւագալի եւ հակումի երգեր», «Աւագ շաբաթ», «Աւագ օրհնութիւններ, Յիսնից եւ հատարակ կիրակիներու», «Մեղեդիներ, տաղեր, գանձեր», «Վերափոխումն Աստուածածնի եւ Տօնք Խաչի» խորագրերը:

Հեղինակը նախատեսել է այդ ամբողջ աշխատանքն ամփոփել 12 հատորներում: Ուրագրավ է, որ Սրբազանը հանգամանորեն ուսումնասիրել է այդ շարականների տարբերակները, դրանց սկզբնաղբյուրները, վստահ լինելով, որ դրանք երաժշտագիտության համար կունենան կարեւոր նշանակություն:

Աշխատության մեջ տրված են ինչպես միաձայն, այնպես էլ դաշնամուրի նվագակցությամբ կատարվող շարականների ու մեղեդիների նոտաները, ինչպես նաեւ դրանց խոսքերը:

Հայաստանյայց Առաքելական եկեղեցու երաժշտական ժառանգության՝ Զարեհ Սրբազանի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. կաթողիկոսի հրամանով ու նորին սուրբ օծությամբ, այդ 6 հատորների լույս ընծայումը մեծ գանձ է ոչ միայն հայ եկեղեցական երաժշտության պահպանման, այլեւ ամբողջ հայ մշակույթի պատմության համար:

ԴԵՐԵՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍԱՄՈՒԼ

Կարդացեք «Բեմ եկեղեցվո»

«Էջմիածին» ամսագրի «Բեմ եկեղեցվո» հավելվածը, որը լույս է տեսնում այս տարվա հունվարից, բաղարել է հերթական 16-րդ համարը: Այն

Գրիգոր Խանջյան. «Աստվածածայր»

խմբագրում է Աստղիկ եղիսկոպոս Արիստակեսյանը: Ինչպես վկայում է խմբագրի տեղակալ Վարդան Դեւրիկյանը, «Բեմ եկեղեցվո»-ն միտում ունի դեղի ոչ միայն կրոնական, այլեւ աշխարհիկ խնդիրների լուսաբանումը, մանավանդ ազգային հոգեւոր արժեքների ոլորտում: Համառում տպագրված են Սեղոմի ծ. վրդ. Սարգիսյանի «Վերափոխումն սուրբ աստուածածնի», Տէր Զենոբ քհն. Նալբանդեանի «Ս. Աստուածամոր վերափոխումը շարականներուն մէջ» «հոդվածները» (օգոստոսի 14-ը ըստ մեր կրոնական օրացույցի. Աստվածածնի վերափոխման, խաղողօրհնեքի օրն է), «Բարեխոսությամբ սուրբ Աստվածածնի» խմբագրականը, մանուկների համար Աստվածաշնչի շարադրանքը՝ Անանիա եղիսկոպոսի բարգմանությամբ, «Հաւատով խոստովանիմ» աղոթքը, Արտակ ավագ քհն. Սիմոնյանի՝ «Հայ եկեղեցու ժամերգությունները»: Նախավերջին էջում գեղեցիկ են հայ եկեղեցու վարդապետներից բաղվածքներ՝ Աստվածածնի մասին: Թերթի վերջին էջը պատմում է, թե ովքեր են Եհովայի վկաները եւ ինչ են քարոզում («Եղած աղանդոց» խորագրի տակ): Հավելվածը լույս է տեսնում աշխարհաբար, հիմնականում արեւելահայերեն եւ նոր ուղղագրությամբ:

Համարը ձեւավորված է Վարդգես Սուրենյանցի եւ Գրիգոր Խանջյանի ստեղծագործություններով: Ունի տպագրական բարձր որակ եւ տպագրվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վաճառվում է 4 սենյականոց բնակարան Նորքի 9-րդ զանգվածում: Գինը՝ պայմանագրային: Տեղեկությունների համար զանգահարել 65.62.55 հեռախոսահամարով:

ՀԱՄԱՈՌ

Երեխաները կրկին չեն զվարճանալու

ԵՐԵՎԱՆ, 17 ՕԳՈՍՏՈՍ, ՓԱՍՏ: Այսոիսի կարծիք հայտնեց Պետկրկեսի տնօրեն Հ. Խասխասյանը: Արդեն երեք տարի է, ինչ Երեւանի կրկեսը սեպտեմբեր ամսին չի բացում իր բատերաշրջանը, քանի որ... հարկավոր են խոշոր գումարներ, հանդիսատեսությունը շրջափակման մեջ է, եւ չի աշխատում երկաթգիծը: Չկա կառավարական հովանավորություն եւ հոգատար ծնող: աշխատանքը հունի մեջ գցելու համար: Ծայրահեղ է կրկեսի շենքին վիճակը: Իսկ 215 աշխատակիցներից մնացել են ընդամենը 16-ը:

Կնվի Շանթի 125 ամյակը

ԵՐԵՎԱՆ, 16 ՕԳՈՍՏՈՍ, ՓԱՍՏ: Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը նախապատրաստվում է Լեւոն Շանթի ծննդյան 125-ամյա հոբելյանին: Թանգարանի աշխատակիցները հատուկ նշանակություն են տալիս այս կարեւոր տարելիցին, քանզի, նրանց կարծիքով, Թումանյանի եւ Կոմիտասի հոբելյանների տոնակատարության մեծ աղմուկի մեջ կարծես սվերում է մնում հայ ժողովրդի մյուս արժանավոր զավակը՝ Շանթը: Հոբելյանական միջոցառումները տեղի կունենան օգոստոսի վերջին: Արդեն պատրաստ է ցուցադրության հարուստ հավաքածուն, որը կներկայացնի Շանթի ձեռագրերը, նամակները, անձնական իրերն ու լուսանկարները: Այս ցուցադրության մեջ առաջին անգամ կներկայացվի Շանթի անտիպ նամակներից մեկը, որն ըստ թանգարանի գիտական քարտուղար Գայանե Դաբաղյանի, ծրագրային նշանակություն ունի գրողի քաղաքական կողմնորոշման առումով: Նամակը գրվել է 1918 թվին եւ ցայսօր անհայտ է եղել:

ՍՈՍԿՎԱ

Վախճանվել է Եվգենի Սիմոնովը

Մոսկվայում վախճանվել է ժամանակակից բեմի վարպետներից մեկը՝ ազգությամբ հայ Եվգենի Սիմոնովը:

Եվգենի Ռուբենի Սիմոնովը ծնվել է 1925 թ., Մոսկվայում: Ավարտել է Շչուկինի անվան թատերական ուսումնարանը: Նույն թվականից եղել է Վախթանգովի անվան թատրոնի օրեցիսորի օգնական (1948-54-ին՝ նաեւ Մոսկվայի «Կաուչուկ» ակումբի բանվորական թատրոնի գեղարվեստական ղեկավար), 1958-ից՝ օրեցիսոր, 1968-ից՝ գլխավոր ռեժիսոր): 1962-63 թթ. գլխավորել է Փոքր թատրոնը:

Եվգենի Սիմոնովը ստեղծագործական շարունակում էր Եվգենի Վախթանգովի գեղարվեստական ավանդները: Նրա բեմադրություններից առանձնապես հայտնի է Պոգոդինի «Հրացանավոր մարդը» (1970), Կորնեյչուկի «Բազմաձակաը» (1975), Շեքսպիրի «Անտոնիոս եւ Կլեոպատրա» (1972), Մայակովսկու «Միստերիա բուֆֆ» (1981): 1971-ին Երեւանի դրամատիկ թատրոնում Եվգենի Սիմոնովը բեմադրել է Էդուարդո դե Ֆիլիպպոյի «Ֆիլումենա Մարտուրանո» պիեսը:

Գրել է պիեսներ, երկար տարիներ դասավանդել է Շչուկինի անվան թատերական ուսումնարանում: Ազգերի թատրոնի գեղարվեստական ղեկավարն էր եւ ձգտում էր պահպանել նախկին միութենական թատրոնների հոգեւոր տարածքը: Չնայած ֆինանսական դժվարություններին, Մոսկվա էր բերում թատրոններ Լիտվայից, Հայաստանից, Վրաստանից...

ԵՐԵՎԱՆ

Դրամատիկն ստեղծում է իր «Շեքսպիրականը»

ԵՐԵՎԱՆ, 17 ՕԳՈՍՏՈՍ, ՓԱՍՏ: Երեւանի Հրաչյա Ղափլանյանի անվան պետական դրամատիկական թատրոնը շարունակում է շեքսպիրյան ներկայացումների շարքը: Թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Խանդիկյանը բեմադրում է «Ռոմեո եւ Ջուլիետա» ողբերգությունը:

«Այս գործը բեմադրելու ցանկությունը վաղուց կար, սակայն ուրիշ խնդիրների հետ առկա էր նաեւ դերակատարների հարցը: Այժմ այն լուծված է. մենք ունենք հրաշալի Ռոմեո եւ Ջուլիետա», ասաց Արմեն Խանդիկյանը:

Գլխավոր դերակատարումների համար բեմադրիչն ընտրել է թատրոնի դերասաններ Հրաչյա Հարությունյանին եւ Լիլիթ Մնացականյանին: Ա. Խանդիկյանը հայտնեց, որ չնայած փորձերը խիստ աղյուսավոր են, եւ դերասաններն աշխատում են մեծ եռանդով, առայժմ դեռ հայտնի չէ, թե երբ պատրաստ կլինի ներկայացումը: Բացի «Ռոմեո եւ Ջուլիետից», թատրոնում պատրաստվում է եւս մեկ ներկայացում, որը թատրոնի ամանորյա նվերը կլինի մանուկներին:

ՎԱՍՆԱՁՈՐ

ՀՌԱԿ-ը օժանդակում է գրողներին

Օգոստոսի 16-ին, Հայաստանի գրողների միության վանաձորի բաժանմունքում կայացավ հանդիպում ՀՌԱԿ հանրապետական վարչության փոխտնօրեն Կարեն Կոստանդյանի, Վանաձորի «Գեղամ Սահակյան» ակումբի ատենապետ Արսեն Հովսեփյանի եւ այլ պատասխանատու կուսակցական ընկերների հետ: Քաղաքի գրողների հետ ծավալված զրույցում արծարծվեցին մտավորականությանը հուզող այսօրվա հիմնահարցեր: Սասնավորապես անդրադարձան նրանց սոցիալական ծանր վիճակին: Դրանով էր պայմանավորված հյուրերի տրամադրած դրամական օգնությունը ՀՅԱ քաղաքային բաժանմունքին, որը, ըստ ընկ. Կոստանդյանի, վերջինը չի լինի: ՀՅԱ Վանաձորի բաժանմունքի քարտուղար, արձակագիր Նելլի Շահնազարյանը, հայտնելով քաղաքի գրողների երախտագիտությունը, կարեւորեց այդ ծեռնարկի նաեւ բարոյական կողմը: Նման հանդիպումներ եւ նյութական նվիրատվություններ են եղել նաեւ Երեւանի, Էջմիածնի եւ Գյումրվա գրական կազմակերպություններին:

Մ. Մ.

ԿՐՆՈ

Մուլտֆիլմերը ներկայացնում են մեր այսօրը

ԵՐԵՎԱՆ, 17 ՕԳՈՍՏՈՍ, ՓԱՍՏ: «Լենսեյ» ռուս-գերմանական համատեղ կազմակերպության հայկական մասնաճյուղում այսօր գրաղվում են երկու մուլտիպլիկացիոն կինոնկարների նկարահանմամբ: «Աղրել անհնարին է» երեք մասանոց ֆիլմը նախատեսված է եւ մեծահասակների, եւ փոքրերի համար: Այն իր ավարտին կհասնի եւ առաջին անգամ կցուցադրվի Ամերիկայում կայանալիք «Ոսկե առուն» միջոցառմանը:

Երկարդ «Ուրացող հավեր» մանկական երաժշտական ֆիլմի առաջնությունը կկայանալի դեկտեմբեր ամսին: Երկու կինոնկարներում էլ կենդանիների կերպարներով (շուն, ագռավ, կատու, հավ, առնետ, մուկ եւ այլն) ներկայացվում է մեր այսօրը, վեր են հանվում մեր կյանքի տաճ ու բացասական կողմերը:

Կինոնկարների սցենարի հեղինակն է կազմակերպության տնօրեն Հարություն Գրիգորյանը, բեմադրիչը՝ Յուրա Մարաղյանը:

«Հայկական նոր տարեգրությունը» ԼՂՀ-ին

Իր «Հայկական նոր տարեգրություն» ծրագրի իրականացման առաջին քայլն է համարել 300 գունավոր լուսանկարներից կազմված ցուցահանդեսը հայտնի կինոռեժիսոր, միջազգային պարգեւների արժանացած կինոնկարների հեղինակ Կարեն Գեւորգյանը: Ըստ նրա, Ստեփանակերտ բերված ցուցահանդեսը առաջինն է Լեռնային Ղարաբաղում վերջինիս մեկուկեսամյա աշխատանքի, եւ հեղինակի հարգանքի տուրքն է արցախցիների տոկունությանը: Անկախության համար պայքարող ժողովրդի կյանքը՝ հերոսների ցավերով եւ ուրախություններով, պատկերող լուսանկարները ցուցադրվելու են նաեւ Երեւանում: Հավաքածուն նվեր է տրվել ԼՂՀ-ին: Ինչպես հայտնել է Կարեն Գեւորգյանը ԼՂՀ մամուլի եւ լրատվության վարչության աշխատակցին, լուսանկարչությունն իր ստեղծագործության միակ ուղղությունը չէ: Ներկայումս նա աշխատում է «Երկիր Նաիրի» պայմանական անունը կրող նոր վավերագրական կինոնկարի վրա, ֆիլմեր է պատրաստում կինոյի եւ հեռուստատեսության համար:

Մահազդ

Երկուշաբթի օրը, 84 տարեկան հասակում մահացավ Հայաստանի ժուռնալիստների միության անդամ Բաբկեն Մելոնի Մավիսակալյանը: Թաղումը՝ այսօր, ժամը 14-ին, Աբովյան 36, բնկ. 28: Մեր խորագոյն ցավակցությունները մեր գործընկերոջը՝ Ռոբերտ Մավիսակալյանին, եւ հանգուցյալի մյուս բոլոր հարազատներին:

digitised by A.R.A.R.@

ՇԱԽՄԱՏ

Խիղճ եւ տրամաբանություն

Հարցազրույց շախմատային տեսաբան Գագիկ Հակոբյանի հետ

Գայկական շախմատային աշխարհում ծանոթ դեմք է Գագիկ Հակոբյանը՝ այդ բազմատաղանդ մարդը, որ լայն հեղինակություն եւ ժողովրդականություն է վայելում նաեւ լիբանանահայ շախմատիստների շրջանում: Ճիշտ ոլորտիվը չէի ունեցել նրան մոտիկից ճանաչելու, մտանվանդ որ տարիներ առաջ կարդացել ու վերլուծել էի «Օտդակներ սկզբնախաղերում» գիրքը: Իսկ հայաստանյան մամուլում բազմաթիվ անգամ հանդիպել էի իր ստորագրությունը կրող հոդվածների: Հակոբյանն տաղանդավոր շախմատիստ ու տեսաբանը, լրագրողն ու մեկնաբանն այն եվիդալներից է, որը մինչեւ հիմա էլ մնում է ոլորտների վրա՝ հակառակ «արդիական» կանոնի ստեղծած ահավոր ոլորմումներին: Միշտ ժպտերես ու բարեհամբույր, ոլորտոտ օգնելու բոլորին: Բեյրութի հայ երիտասարդ ընկերակցության ու հայ կաթողիկե միության շախմատիստները ջերմ փափագ են հայտնել հյուրընկալելու Գագիկ Հակոբյանին Լիբանանում: Շախմատն այդ երկրում ծաղկում է ադրում, նաեւ արաբական շրջաններում, որ ստեղծվել են բազմաթիվ ակումբներ: Լիբանանյան մամուլը միշտ էլ տոն է տալիս տեղական ու միջազգային շախմատին, լայն հետաքրքրություն ստեղծելով այդ իմաստուն խաղի շուրջ: Այս եւ նման հարցերով մոտենում ենք Գագիկ Հակոբյանին, ողողելով հետեւյալ հարցերը.

ՎԱՍՈ ՄՈՍԿՈՎՅԱՆ
Բեյրութ-Երեւան

– Լիբանանահայ շախմատիստները մեծ ցանկություն են հայտնել ձեզ հյուրընկալելու Բեյրութում, օգտվելով ձեր հսկայական շախմատային փորձից: Ինչպե՞ս եք գնահատում այս երեւույթը:

– Շատ հաճելի է իմանալ, որ հեռավոր Բեյրութում գիտեն իմ մասին, կարդացել իմ գրքերը, եւ ես մեծ հոյարտություն ու ոլորտասխանատվություն եմ զգում նրանց հանդեպ: Ինձ համար հաճելի է, որ իմ ազգակիցները հեռավոր Բեյրութում, օտարության մեջ, մնացել են որոնես հայ եւ ամեն ինչով կարված են Հայաստանի հետ: Հենց թեկուզ այն բանի համար, որ շախմատը ինչ-որ տեղ նոպաստել է հայ-արաբական հարաբերությունների զարգացմանը:

Ինձ թվում է, որ այսօր սփյուռքում գտնվող մեր գրոսմայստերները, որ էլ գնան, որ ակումբի հետ էլ ոլորմանագիր կնքեն, միեւնույն է, ի վերջո նրանք ոլորտանելու են Հայաստանի մարզական ոլորտիվը: Դրա փայլուն օրինակն է Ռաֆայել Վահանյանը, որն արդեն մի քանի տարի է ինչ աղորում է Գերմանիայի Բոլոն քաղաքում, բայց անհրաժեշտության դեպքում իր առաջնահերթ խնդիրն է համարում հանդես գալ Հայաստանի հավաքականից. ինչպես որ տեղի ունեցավ վերջերս կայացած ԱՄՆ-Հայաստան մրցախաղում: Ինձ համար նորություն է, որ Լիբանանում շախմատը սկսել է մեծ մասսայականություն վայելել: Հույսով եմ, որ անկախ ամեն ինչից մի քանի տարի անց լիբանանահայ շախմատիստները հանդես կգան միջազգային մրցաշարերում: Եթե սեր կա, նոպատակ կա, աշխատասիրություն ուրեմն հաջողությունն աղաահովված է: Մնացածը հանդիպման ժամանակ, եթե հաջողվի... Կրկին ու կրկին շնորհակալություն բոլոր լիբանանահայ շախմատիստներին:

– Ձեր ո՞ր գրքերը կառանձնացնեք:

– Բոլոր գրքերս լույս աշխարհ են եկել տառաղանքով: Թերեւս ինձ համար բանկ է «Ծուղակներ սկզբնախաղերում» գիրքը ոչ թե այն ոլորտանքով, որ դա իմ առաջին գիրքն էր, այլ նայն բանի համար, որ այդ ձեռնարկը չնայած արդեն 26 «տարեկան է», մինչեւ այսօր էլ մեծ օգնություն է ցույց տալիս ոլորտանի շախմատիստներին: Իհարկե, ինձ հոգեհարազատ է նաեւ աշխարհի 9-րդ չեմոլիոն Տիգրան Պետրոսյանի մասին մենագրությունը: Խիղճս հանգիստ է, որ գոնե այդ գրքով հավերժացրի մեր մեծ հայրենակցի բարի հիշատակը:

Գագիկ Հակոբյանը միաժամանակյա խաղի սեանսի պահին

– Դեռ որ գիրք հրատարակելու՞ եք:

– Անդայման: Արդեն գրել եմ մի նոր ձավալուն ոլորտագիրք, որը նախատեսված է կարգային շախմատիստների համար: Մշակումներ շատ կան, բայց եկեք ժամանակից առաջ չանցնենք:

– Ի՞նչ կասեք ֆիզկուլտուրայի ինստիտուտի շախմատի բաժնի մասին, որը դուք եք ղեկավարում:

– Այդ բաժնի հիմնադիրն եմ: Այն ստեղծվեց 1980 թվականին: Անցած 14 տարիներին մեր բաժինն ավարտել են մոտ 80 ուսանող: Որոնես մարզիչներ, մեթոդիստներ, կամ ֆիզկուլտուրայի ուսուցիչներ աշխատում են հանրապետության տարբեր խաղաֆներում ու շրջաններում: Նշեմ, որ մեր շրջանավարտներից են նաեւ Հայաստանի մի շարք առաջնակարգ շախմատիստներ: Նրանցից կարելի է առանձնացնել գրոսմայստեր, աշխարհի ոլորտանիների եռակի չեմոլիոն Վլադիմիր Հակոբյանին, նախկին Խորհրդային Միության վերջին չեմոլիոն Արտաշես Մինասյանին, Հայաստանի բազմակի չեմոլիոն, գրոսմայստեր Աշոտ Անասասյանին, միջազգային վարպետ Հովիկ Դանիելյանին, Երեւանի կանանց այս տարվա չեմոլիոնուհի Գոհար Հլղաբյանին:

– Ոչ շախմատային հարց: Որեւէ կուսակցության անդամ ե՞ք:

– Դեռեւս ոլորտանական տարիներից ասել եմ կոմունիստ ոլորտնյա ղեկավարների բյուրոկրատիզմն ու կամակորությունները, ձեւական մոտեցումները: Երբեւէ չեմ մասնակցել ոչ շերքերի, ոչ ընտրությունների եւ հնարավորին չափ խուսափել եմ այսպես կոչված ընդհանուր, անիմաստ ժողովներից: Ուսանողական տարիներին նույնիսկ կոմերիմիության անդամ չեմ եղել: Ամբողջ կյանքում առաջնորդվել եմ «խիղճ եւ տրամաբանություն» սկզբունքով: Այնպես որ, կարելի է ասել, իմ «կուսակցությունը» հենց այդ հասկացողությունն է...

Շնորհակալություն հայտնելով Գագիկ Հակոբյանին իր այս հարցազրույց-հանդիպման համար, ցանկանում ենք լավագույնը կյանքում եւ... շախմատում:

ՃԱՆՈՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Հեծանվով Մոսկվայից-Երեւան

ԵՐԵՎԱՆ, 18 ՕԳՈՍՏՈՍ. ՄՆԱՐՔ: 2,5 հազար կիլոմետրից ավելի ճանապարհ անցավ հեծանվով 19-ամյա մոսկվացի Ռոման Տկաչը, որպեսզի Ռուսաստանի մայրաքաղաքից հասնի Երեւան: 22 օրվա ընթացքում Ռոմանը կտրեց 2 սահման, առանց արկածների անցնելով 3 երկրների՝ Ռուսաստանի, Վրաստանի եւ Հայաստանի տարածքները: Միայն Սոչիից Քութաիս երիտասարդ մոսկվացուն հարկ եղավ տեղ հասնել «օդով»: «Սոչիում ես իմացա, որ չեմ կարող անցնել Ինգուրի գետը, որի երկայնքով հիմա տեղաբաշխվել են բաժանարար զորքերը: Ստիպված էի ծալել հեծանիվը եւ նստել ինքնաթիռ: Փոխարենը Քութաիսից մինչեւ Երեւան տեղ հասա առանց դժվարությունների: Եւ ընդհանրապես, ամենուրեք ինձ ընդունեցին սրտաբաց, ու գիտեիր համար ոչ ոք չէր մերժում», ասաց Ռոման Տկաչը: Երիտասարդ հեծանվորդը «Ճանապարհորդություն խաղաղության եւ բնության ոլորտանության համար» մոսկովյան ակումբի անդամ է: Նա 1993 թվականին անցել է 3300 կմ՝ Մոսկվայից հասնելով Կարագանդա: Դալիք մրցաշրջանում Ռոման Տկաչը մտադիր է հեծանվով Վլադիվոստոկից հասնել Լոնդոն:

ՊԱՏԻԺ

ՖԻՖԱ-ն որակազրկեց Պակիստանի ֆուտբոլի ֆեդերացիային

ԳՐԻԳՈՐ ԱՍՊԻՐՅԱՆ
Վալանս, Ֆրանսիա

ՖԻՖԱ-ն որակազրկեց Պակիստանի ֆուտբոլի ֆեդերացիային նրան արգելելով մասնակցել որեւէ միջազգային ոլորտնական խաղի: Այս ոլորտիվը հետեւանք է Պակիստանի ֆուտբոլի ֆեդերացիայում ներքին խնդիրների եւ իրարանցումների: «Պակիստանի ֆուտբոլի ֆեդերացիան ոլորտակվել է եւ բաժանվել երկու խմբի: Նրանք իրար դեմ դատական գործ են հարուցել» հայտնում է ՖԻՖԱ-ն, որը 6 ամիս ոլորմանաժամ է տվել Պակիստանի ֆուտբոլի ֆեդերացիային, որպեսզի վերջինս կարգավորի իր ներքին խնդիրները: Եթե կես տարի հետո խաղաղություն չհաստատվի, ապա ասիական ցամաքամասի ֆուտբոլի ֆեդերացիան (AFC) ոլեսֆ է որոշի վերջնական ոլորտիվը Պակիստանի ֆեդերացիայի համար: ՖԻՖԱ-ի կանոնադրության 57-րդ հոդվածի համաձայն, ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան իրավունք ունի որակազրկել որեւէ երկրի ֆեդերացիային, եթե ներքին հակասությունների ոլորտանով նա ի վիճակի չէ համախմբել ու կազմակերպել իր երկրի ֆուտբոլային կյանքն ու աղաահովել ներկայացուցչությունը միջազգային ասպարեզում: Պակիստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Միլան Մոհամմեդ Ազհարը անընդունելի համարեց ՖԻՖԱ-ի որոշումը, որն ըստ նրա միակողմանի է: Պակիստանի ֆուտբոլի ֆեդերացիայում խնդիրները ծագել են, երբ անցած հուլիսին Արաբական Էմիրություններում տեղի ունեցած Ասիայի երիտասարդական առաջնությանը Պակիստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահն ուղարկել էր մեկ, իսկ նույն ֆեդերացիայի գլխավոր քարտուղարը մի ուրիշ հավաքական:

ՀԱՄԱՌՈՏ

Թանյու Չոլակը փախավ Թուրքիայից

1988 թվականի Եւրոպայի ազգային առաջնությունների լավագույն ոմբարկու թուրք Թանյու Չոլակը գողությունների, թմրադեղերի վաճառի համար դատապարտվել է 22 ամսվա ազատազրկման: Անվանի ֆուտբոլիստն իմանալով դատական վճռի մասին, հարցրել է փախչել երկրից: Թուրքիայի ոստիկանությունը փնտրում է Թանյու Չոլակին, դատավճիռն ի կատար ածելու համար: Վերջերս նրա հետքերը հայտնաբերվել են Մակեդոնիայի մայրաքաղաք Սկոպյեում: Թուրքիան ոլորտնապես ոլահանջում է Մակեդոնիայից Թանյու Չոլակին հանձնել Թուրքիայի ոստիկանությանը: Չոլակը ոլատասխանում է, որ օրինավոր ձեւով է հեռացել Թուրքիայից:

Մարոկկոյի հավաքականի մարզիչը ոլաշտոնանկ

Մարոկկոյի ֆուտբոլի ազգային հավաքականի ավագ մարզիչ Աբդելլահ Բլինդան ոլաշտոնազրկվել է: Հավանաբար ոլատճառը ԱՄՆ-ում տեղի ունեցած աշխարհի 15-րդ առաջնությունում Մարոկկոյի հավաքականի անհաջող ելույթներն են, հատկապես ոլարտությունը Սաուդյան Արաբիայի հավաքականից:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒԵՖԱ-ն կորոշի Եւրոպայի լավագույն մարզադաշտերը

ՈՒԵՖԱ-ն կազմելու է եւրոպական լավագույն մարզադաշտերի ցանկը, որոնց շնորհվելու է հինգ աստղ եւ որոնց իրավունք է տրվելու կազմակերպել չեմոլիոնների լիգայի եզրափակիչ փուլի խաղերը: Այդ մարզադաշտերն ամենամիջոցով ոլետք է ունենան 60 հազար նստատեղ, իսկ հաղթողներ ժամանակակից բոլոր հարմարություններով օժտված ոլետք է լինեն զրոսաշրջիկների համար (լավ օթյակներ, հանգիստ հյուրանոցներ, բարեկարգ ճանապարհներ): Մտադրվում է այնպես, որ Փարիզի «Պարկ դե Պրենս» գեղեցիկ եւ բարեկարգ մարզադաշտը դուրս ոլետք է մնա ՈՒԵՖԱ-ի ցանկից միայն այն ոլատճառով, որ ունի ընդամենը 50 հազար նստատեղ: Իսկ ինչպե՞ս կանեն «Հրազդանը»:

Գ. Ա.

Բանից վարում է
ՄԻՀԵՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԸ

ԿՈՒԲԱ

Կուբացի մարզիկները փախչում են հայրենիքից

ՀԱՎԱՆԱ, 18 ՕԳՈՍՏՈՍ. ԻՏԱՐՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի իշխանությունները մերժեցին մուտքի այցագիր տալ կուբացի 2 լողորդների եւ 3 մարզիչների, որոնք մասնակցելու էին Տեխասում մասնակցել միջազգային խորհրդաժողովի: Այդ մասին չորեքշաբթի հաղորդեց Կուբայի սպորտի ազգային ինստիտուտը:

Հայտարարության մեջ նշվում է, որ անցյալ շաբաթ ԱՄՆ-ը մերժել էր այցագրեր տալ նաեւ կուբացի 2 ուրիշ մարզիչների, որոնք Պուերտո Ռիկոյում ոլում էին մասնակցել ոլոլափի վոլեյբոլի մրցաշարին: Ինստիտուտի հաղորդման մեջ չի նշվում, թե ամերիկացիներն ինչ ոլատճառով են նման որոշումներ ընդունել:

Վերջերս ավելի ու ավելի մեծ թվով կուբացի մարզիկներ են մնում արտասահմանում միջազգային հանդիպումներից ու մրցումներից հետո: Վերջինը Կուբայի բասկետբոլի «աստղ» Ռիչարդ Մաշինսոնն է, որը վճռեց հայրենիք չվերադառնալ Կանադայում աշխարհի առաջնությանը մասնակցելուց հետո:

Մարզիկներից հետ չեն մնում նաեւ մարզական լրագրողները: Հուլիսի վերջերին ԱՄՆ մեկնած «Տրաբախաղորես» թերթի մեկնաբան Լուիս Էռնանդես Իգլեսիասը նույնպես որոշեց Կուբա չվերադառնալ: Նա այս տարի դարձավ չվերադարձած 4-րդ մարզական լրագրողը, ինչը յուրօրինակ ռեկորդ է այդ բնագավառում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ

Օգոստոսի 23-ին ժ. 20-ին «Արարատը» Երեւանի «Հրազդան» կենտրոնական մարզադաշտում ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության նախնական փուլի ոլատասխան խաղում հյուրընկալելու է Սոֆիայի ԲԿՄԱ թիմին (Բուլղարիա): Այդ խաղը լուսաբանել ցան կացող լրատվության բոլոր միջոցների մարզական լրագրողները հավատարմագրվելու համար դիմեն «Ազգ» թերթի խմբագրություն՝ Սուրեն Բաղդասարյանին կամ Աշոտ Մարտիրոսյանին, հետեւյալ հեռախոսահամարներով՝ 58-18-41, 58-24-83, ներկայացնելով 3X4 չափի մեկական լուսանկար:

digitised by A.R.A.R.@

ԱՆԱՏՈԼԻԱ

Թանսու Չիլլերը «վերածնում է» Թուրքիան

ՆԻԿՈՍԻԱ, 18 ՕԳՈՍՏՈՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երկրի արեւելքում իր քաղաքականության մեջ Թուրքիան «Վերջ դենք ահաբեկչությանը» կարգախոսից վերջապես անցնում է «Վերածնենք մեր հայրենիքը» կարգախոսին, ընդգծեց վարչապետ Թանսու Չիլլերը թուրքական TRT-ի հեռուստաընկերությանը տված հարցազրույցում: Նա չորեքշաբթի օրվանից շրջագայում է Արեւելյան Թուրքիայի մի շարք շրջաններում, որտեղ տարիներ շարունակ արտակարգ դրություն է հաստատված Թուրքիայի անվտանգության ուժերի եւ Քրդստանի բանվորական կուսակցության գրոհայինների ռազմական գործողությունների ղեկավարությամբ:

Բազմաթիվ քննադատներ Արեւելյան Անատոլիայում հանգեցրել են մեծ զոհերի եւ ավերածությունների: Այժմ, երբ թուրքական բանակը, Չիլլերի խոսքերով, հիմնականում կոտրել է «ահաբեկչության ողնաշարը» եւ գրեթե լիովին վերահսկում է իրավիճակը արտակարգ դրության շրջաններում, օրակարգում դրվում է տնտեսական կյանքի վերականգնման հարցը: Վարչապետի կարծիքով, ժամանակն է լրջորեն զբաղվել այդ հետամնաց շրջաններում խաղաղ կյանքի վերածնությամբ: Այդ նպատակով կառավարությունն առավելագույն միջոցներ կհատկացնի: Դրանք նախատեսված են հարյուրավոր գյուղերում դաստակերտման վերականգնման, ճանապարհաշինության, գյուղատնտեսական արտադրության կարգավորման համար: Չնայած երկրի տնտեսական լուրջ դժվարություններին, հենց հարավարեւելյան 10 խոշորագույն գավառներին կատիլալ խոշոր ներդրումներ են հատկացվում «ծաղր վերերի բուժման համար», ընդգծեց Թանսու Չիլլերը Բաթման քաղաքում կայացած հանդիպմամբ:

ՏԱՄԱՍՈՍ

Տաջիկստան. Սպանվեց հեռուստատեսության ղեկավարներից մեկը

ԴՈՒՇԱՆԲԵ, 18 ՕԳՈՍՏՈՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այստեղ այսօր սպանվեց հանրապետական հեռուստատեսության ծրագրերի տնօրեն, 41-ամյա լրագրող Դավլաթալի Ռահմոնալիեւը: Ինչպես հայտնեցին հանրապետության ներքին գործերի նախարարությունում, նա գնդակահարվել է տեղական ժամանակով 7:30-ին, իր տան մուտքի մոտ, երբ մեկնում էր ծառայության: Կրակողը բաց թողել է: Սպանության շարժառիթները հետաքննվում են իրավապահ մարմինների կողմից: Դավլաթալի Ռահմոնալիեւը վերջերս զինված դիմակայության ժամանակ հայտնի դարձավ որպես հանրապետությունում սահմանադրական կարգի վերականգնման գաղափարական կողմնակիցներից մեկը: Նա գլխավորել էր Կուլյաբիի հեռուստատեսությունը, որը դարձել էր ընդդիմությանը դիմակայող Կուլյաբիի շարժման յուրօրինակ խոսափողը:

Գամսախուրդիային սպանել է իր նախկին զինակից վարչապետ Գուգուվիլին

ՁԻՒԼՒՍԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ- «Ֆորում» թերթը հեռախոսագիր ստացավ Վրաստանի նախկին նախագահ Զվիադ Գամսախուրդիայի այրուց՝ Մանանա Արչվաձե Գամսախուրդիայից, որը պնդում է, թե իր ամուսնուն սպանել են նրա 3 նախկին զինակիցները, որոնցից մեկը Գամսախուրդիայի օրոք վարչապետ եղած Վիսարիոն Գուգուվիլին է:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
A STYLE
ORIGINAL DESIGN

ՕԳՏՎԵՔ ՄԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ

Մեր հասցեն՝ Երեւան, Հանրապետության 47,
Հեռախոսներ՝ 562863, 581841



«Քսիմեքստուր-Երեւան» ֆիրման հրավիրում է

հրապուրիչ ճանապարհորդության «Ֆյոդոր Շալյապին» հարմարավետ ջերմանավով՝

12.09-25.09
Օդեսա - Նեապոլ - Մալթա - Պիրեյ - Ստամբուլ - Օդեսա

26.09-01.10
Օդեսա - Պիրեյ - Ստամբուլ - Օդեսա

«Քսիմեքստուր-Երեւան» ֆիրման և նավի անձնակազմը կապահովեն Ձեր լիարժեք հանգիստը և բարձրակարգ սպասարկումը շրջագայության ընթացքում:

Մեր հասցեն՝
Կորյունի փ., 5 Հեռ. 52-39-08, 52-31-44

ARMENTRUST
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵՔ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼՆԵՐԻ ՀԵՏ

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՍԵՐՏԻՖԻԿԱՏՆԵՐԸ

ԱՆՎԱՆԱԿԱՆ (նոմինալ արժեք)	ԴԻՎԻԴԵՆԴՆԵՐ	ԿՅՈՒՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ
50 ԴՈԼԱՐ	6%	ԱՄՍԵԿԱՆ
50 ԴՈԼԱՐ	20%	ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ
100 ԴՈԼԱՐ	50%	ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ
500 ԴՐԱՄ	1000%	ՏԱՐԵԿԱՆ

ԱՐՏՈՒՆԱԳԻՐ (ԼԻՑԵՆԶԻԱ) ՆՀ 0003
ՀՈՒՐԱՐԿՍԱՆ ԱՁԴԱԳԻՐ ԲՏ 0005

1994 թ. նոյեմբերի 4-ից
ARMENTRUST
բաժնետիրական ընկերությունը
երաշխավորում է
բաժնետոմսերի սերտիֆիկատների
բացարձակ լիկվիդայնությունը

Դա նշանակում է,
որ ընկերության բաժնետոմսերի
առք եւ վաճառքի ցանկացած կետում
դուք կարող եք
դրանք իրացնել նոմինալ արժեքից
բարձր գնով

Լայնածավալ սեփականաշնորհման սկզբից
ARMENTRUST ընկերության
բաժնետերերը
արտոնություններ կունենան
իրենց վաուչերների տնօրինման հարցում:

Մեկ անձի կողմից գնվող
բաժնետոմսերի քանակը
անսահմանափակ է

ԵՐԵՎԱՆ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 27 (Սայաթ-Նովա եւ Նալբանդյան խաչմերուկ)
ՀԵՌ. 58 6718, 58 6719

NORINVEST

ՎԱՐԳԵԼԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Norinvest-ի տնօրենությունը-ուրախությամբ տեղեկացնում է իր ավելի քան 22.000 հաճախորդներին նոր, հարմարավետ օֆիս տեղափոխվելու մասին, որը գտնվում է Նալբանդյան փողոցի թիվ 5 շենքում (նեղոցի «Հանրապետության հրապարակ» կայարանի դիմաց): Մենք հարգված ենք, որ մեր հեռագա հաճագործակցությունը Ձեզ միայն երջանկություն ու բարեկեցություն կբերի:

Ընկերության ստեղծման երկրորդ տարեդարձի առթիվ պատրաստվում է մանրամասն հաշվետվություն նրա ինվեստիցիոն գործունեության մասին: Այսօր ցանկանում ենք հակիրճ ներկայացնել այդ գործունեության հիմնական ուղղությունները: Անվանական պարտատոմսերի միջոցով ներգրավելով Ձեր ժամանակավորապես ազատ միջոցները եւ ուղղելով դրանք բիզնես-նախագծերի իրագործմանը, մենք առաջնորդվում ենք հետեւյալ սկզբունքներով. հուսալիություն, շահութաբերություն, ներքափանցելիություն, ղեկավարելիություն, հեռանկարայնություն:

Ամեն տարի Norinvest-ի հաճախորդների համար կազմակերպվում են հանդիպումներ, որոնց ընթացքում կարող եք մոտիկից ծանոթանալ այն ձեռնարկություններին եւ նախագծերին, որոնցում ներդրված են Ձեր միջոցները:

Ստորեւ ներկայացնում ենք NORINVEST-ի ինվեստիցիոն գործունեության հիմնական ուղղությունների ցանկը.

- խոշորագույն կոմոյուտերային ընկերություն Հայաստանում (110 աշխատակիցներ, մասնաճյուղեր ԱՄՆ-ում, ՄԱԷ-ում եւ Ռուսաստանի Դաշնությունում): Պատվիրատուներ՝ 33 կենտրոնական բանկ, այլ ոլեական եւ մասնավոր բանկեր, «Սիմենս» ընկերություն (Գերմանիա), Ֆրանսիայի կրթության նախարարություն» AIM ամսագիր (ԱՄՆ), խոշորագույն հյուրանոցային (ԱՄՆ) եւ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Անգլիայի, Կանադայի, Ռուսաստանի Դաշնության մի շարք այլ ընկերություններ
- խոշոր եղջերավոր անասունների ֆերմա (250 գլուխ, օրական 1000 լիտր կաթ արտադրողականությամբ)
- թռչնաբուծական ֆերմա (6000 ածան հավով)
- ճագարաբուծական ֆերմա (ճագարների 300 ընտանիքի հաշվով, բոլորկումը օգոստոսին)
- կաթի գործարան (տոմպիր, կաթ, թթվասեր, կաթնաշոռ, արտադրողականությունը 10 տոննա մեկ հերթափոխում)
- Պահածոյի գործարան (նուշաբաների, ջեմերի, հյութերի, կոմպոտների, տոմատի մածուկի արտադրության, արտադրողականությունը մոտում 12 տոննա շահագործումը սեպտեմբերին)
- Հացի գործարան (ֆրանսիական սարքավորումներ, արտադրողականությունը 2400 կգ մեկ հերթափոխում եւ երուբակերենի արտադրության բուլդոզերական սարքավորումներ, արտադրողականությունը 500 կգ մեկ հերթափոխում)
- Պաղպաղակի արտադրություն (հունգարական հոսագիծ, 500 կգ մեկ հերթափոխում)
- Հանակցված կերերի փոքրաչափ հոսագիծ (արեւային էներգիայի օգտագործմամբ, բոլորկումը՝ սեպտեմբերին)
- Արտահանող-ներկրող ընկերություն, որն ուղիղ պայմանագրերով աշխատում է այնպիսի աշխարհահռչակ ֆիրմաների հետ, ինչպիսիք են Philip Morris, Coca-Cola, Seagrams, Kraft General Food եւ այլ ընկերությունները
- Սպրանքների եւ արտադրանքի իրացման խոշորագույն ցանց
- Շուրջօրյա աշխատող սուպերմարքեթ սննդամթերքի լայն տեսակներով (շահագործումը՝ սեպտեմբերին):
- Հեռախոսակապով ավտոմեքենաների պատվերներ ընդունող շուրջօրյա աշխատող ընկերություն, որն ուղեւորափոխադրումները կատարում է ինչպես ԳԱՀ, «միգուլի» մեքենաներով, այնպես էլ Mercedes ֆիրմայի նորագույն մոդելներով
- Կիսաֆաբրիկատների արտադրության եւ սննդամթերքի տուն առաքման, խնջույքների եւ ընդունելությունների սպասարկման ոլորտում մասնագիտացող ֆիրմա
- Փոստային ծառայություն՝ Federal Express-ի հետ հանձնող (շահագործումը՝ սեպտեմբերին):
- Մեկ միլիոն դոլար կանոնադրական հիմնադրամով առեւտրային բանկ (շահագործումը՝ սեպտեմբերին): Հիմնադիրների թվում են արեւմտյան խոշորագույն ֆինանսական կառույցները: 1995 թ. նախատեսվում է կանոնադրական հիմնադրամը հասցնել 10.000.000 դոլարի
- Աղահովագրական ընկերություն

Մանրամասներին կարող եք ծանոթանալ հետեւյալ հասցեով.
Նալբանդյան 5: Հեռախոս՝ 56 19 31:

A STYLE

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23 Արսենյան 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 1824 Տպաքանակը՝ 5000 Ստորագրված է տպագրության 18.08.1994 Գինը՝ 10 դրամ

digitised by A.R.A.R.@